

## Լիբանանեան Լուրեր

### Հարիւրի Բանակցութիւններ Վարեց Անվտանգութեան Բարձրաստիճան Պաշտօնատարներու Հետ



Վարչապետի պատշոնակատար Սաատ Հարիւրի Հինգշաբթի իր նստավայրին մէջ առանձին հանդիպումներ ունեցաւ անվտանգութեան բարձրաստիճան պաշտօնատարներու հետ՝ քննարկելու երկրին մէջ տիրող ապահովական իրավիճակը: Այս մասին կը հաղորդեն Հարիւրի տեղեկատուական գրասենեակէն:

Լիբանանեան բանակի հրամանատար ժողգէ Գունի եւ ռազմական տեղեկութեան գործակալութեան պետ Անթուան Մանսուրի հետ Հարիւրի քննարկեց շարք մը խնդիրներ, որոնք հիմնականօրէն կ'առնչուին ռազմական հաստատու-

թիւններու հետ:

Վարչապետի պաշտօնակատարը ընդունեց նաեւ ներքին ապահովական ուժերու պետ Իմատ Օթմանը, որ Հարիւրիին համառօտ ներկայացուց ՆԱՌԻ-ի կողմէ իրականացուող գործողութիւնները, որոնց նպատակն է անվտանգութեան մակարդակը բարձրացնել երկրի տարածքին:

Հարիւրի նաեւ հանդիպեցաւ պետական անվտանգութեան պետ, հրամանատար Թոնի Սալիպայի հետ՝ խօսելու Լիբանանի մէջ ապահովական իրավիճակին մասին:

Էջ 08 ▶▶

## Միջազգային Լուրեր

### Ազրայէճանի Մէջ Ընդդիմադիր REAI Կուսակցութիւնը Խորհրդարանական Արտահերթ Ընտրութիւններ Կը Պահանջէ

Ազրայէճանի մէջ գործող ընդդիմադիր REAI (Հանրապետական այլընտրանք) կուսակցութեան նախագահ Իլգար Մամետովը, որ բանտէն ազատ արձակուած է նախորդ ամիս, կը պահանջէ Ազրայէճանի մէջ իրականացնել խորհրդարանական արտահերթ ընտրութիւններ:

Այս մասին, ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»-ը, կը յայտնէ ազրայէճանական «Թուրան» լրատուական գործակալութիւնը:

Մամետովը արտահերթ ընտրութիւններ իրականացնելու անհրաժեշտութիւնը հիմնաւորած է անով, որ Ազրայէճանի այժմու խորհրդարանը չ'արտացոլել է չի ներկայացնել ժողովուրդի շահերը, եւ որ 2018-ի Ապրիլին տեղի ունեցած նախագահական արտահերթ ընտրութիւնները եղած են բեմադրութիւն:

«Ապրիլին տեղի ունեցած ընտրութիւններուն վերաբերեալ միջազգային դիտորդներու գնահա-

տականները եղած են աւելի կտրուկ եւ բացասական, քան միւս ընտրութիւններուն ժամանակ», - ֆէյսպուքեան գրառումին մէջ նշած է Մամետովը:

Ընդդիմադիր կուսակցութեան առաջնորդը նշած է, որ Իլհամ Ալիեւը երկրին մէջ տիրող իրավիճակը աւելի չլարելու համար պետք է համաձայնութիւն տայ խորհրդարանէն ներս արտահերթ ընտրութիւններ կազմակերպելու համար:

«Եթէ Ալիեւը քաղաքական հասարակական սկզբունքը կը համարէ պետութեան ղեկավարման միջոց եւ չի ցանկար, որ երկրին մէջ տիրող քաղաքական-հասարակական իրավիճակը աւելի լարուի, պետք է համաձայնութիւն տայ խորհրդարանին մէջ արտահերթ ընտրութիւններ կազմակերպելու համար, սակայն պետք է այնպէս կատարուի, որ խորհրդարանէն ներս սակաւա-

Էջ 08 ▶▶

## Հայրենի Լուրեր

### Նիկոլ Փաշինեան Աշխատանքային Այցով Կը Մեկնի Ռուսիոյ Դաշնութիւն



Սեպտեմբեր 8-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան աշխատանքային այցով կը մեկնի Ռուսիոյ Դաշնութիւն:

Ինչպէս կը փոխանցէ «Արմէնփրէս»-ը, ՀՀ կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութենէն կը տեղեկացնեն, որ նոյն օրը Մոսկուայի մէջ կը կայանայ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինի հանդիպումը: Այցի ծիրէն ներս նախատեսուած է նաեւ հանդիպում Մոսկուայի հայ գործարար համայնքի ներկայացուցիչներուն հետ:

### Կառավարութիւնը Կը Խրախուսէ Ներդրումային Հերթական Ծրագիրը. Կը Ստեղծուի 112 Նոր Աշխատատեղի

Սեպտեմբեր 6-ին տեղի ունեցած է ՀՀ կառավարութեան հերթական նիստը, որ վարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Ինչպէս կը փոխանցէ «Արմէնփրէս»-ը, ՀՀ կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութենէն կը տեղեկացնեն, որ կառավարութեան նիստին քննարկուած է «Երեխայի ծննդեան միանուագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդեան միանուագ նպաստ նշանակելու եւ վճարելու կարգը հաստատելու մասին» որոշումին մէջ փոփոխութիւններ կատարելու հարցը, որ ուղղուած է ընտանիքներու ընկերային պաշտպանութեան մակարդակի բարձրացման, որոնք կը պատրաստուին ունենալու 2-րդ երեխան: Համաձայն գործող կարգի՝ առաջին եւ երկրորդ երեխաներու ծննդեան պարագային, երեխայի ծննդեան միանուագ նպաստի չափը կը կազմէ 50 հազար դրամ, երրորդ կամ չորրորդ երեխայի պարագային՝ 1 միլիոն դրամ, հինգերորդ եւ իւրաքանչիւր յաջորդ երեխայի պարագային՝ 1 միլիոն 500 հազար դրամ: Այսինքն՝ երեխայի ծննդեան

Էջ 08 ▶▶

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Ընկերության Կեանքին Հետ Աղերս Ունեցող Հարցերուն Նկատմամբ Եկեղեցին Իր Իրայատուկ Ըսելիքը Ունի» Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Չորեքշաբթի, 5 Սեպտեմբեր 2018-ին հրաւերով Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական համալրարանին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս դասախօսութիւն մը տուաւ «Աստուածաբանութիւն եւ քաղաքականութիւն» նիւթին շուրջ: Յայտնենք, որ ամբողջ շաբթուան վրայ տարածուած ու համալսարանին կողմէ կազմակերպուած համագումարին նիւթն էր յիշեալ թեման, որուն վեհափառ հայրապետը յատուկ կերպով հրաւիրուած էր եզրափակիչ դասախօսութիւնը տալու:

Համալսարանի նախագահը՝ դոկտ. Ճորճ Սապրան, ներկայացնելով Նորին Սրբութիւնը՝ ըսաւ, թէ ան «կարիքը չունի ներկայացուելու, որովհետեւ քրիստոնէական ու միջկրօնական աշխարհէն ներս հանրածանօթ դեմք է իր ստանձնած պատասխանատուութիւններով, հրատարակութիւններով ու դասախօսութիւններով»: Ապա ան հրաւիրեց հայրապետը իր խօսքը ուղղելու:

Իր դասախօսութիւնը վեհափառ հայրապետը սկսաւ հետեւեալ դրուագը յիշելով. 1998 թուականին Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի 8-րդ համաժողովը տեղի ունեցաւ Հարարի (Չիմպպայուէյ) մէջ: Համագումարին առաջին օրը, շուրջ 100 անձերէ բաղկացած խումբ մը, ներկայացնելով աւելի քան 5000 հոգի հաշուող համաժողովը այցելեց նախագահ Մուկապէյին՝ ընդառաջելով անոր հրաւերին: Ընդունելութեան սկիզբը նախագահը, խօսքը ուղղելով ներկաներուն, հեզնական ոճով ըսաւ. «Դուք՝ հոգեւորականներդ, պետք է զբաղիք միայն երկինքի հարցերով...»: Որպէս ատենապետ ԵՅԽ-ին՝ իմ պատասխանս մէջ ըսի. «Որպէս քրիստոնէայ՝ դուք պետք է գիտնաք, թէ երկինքի մէջ հարցեր չկան, այլ միայն երկրի վրայ, եւ այդ հարցերը հետեւանք են մարդու մեղքին, անարդարութեան ու մարդկային իրաւանց բռնաբարման. Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ մարդուն հարցերը լուծելու, այլ խօսքով՝ մարդը ազատագրելու իր մեղքէն եւ մարդուն ցոյց տալու դէպի փրկութիւն ընթացող

ճամբան»: «Այս ըլլալով Քրիստոսի առաքելութեան նպատակը, այս է նաեւ Եկեղեցւոյ առաքելութեան եւ իր աստուածաբանութեան նպատակը», - ըսաւ վեհափառ հայրապետը՝ իր խօսքը ուղղելով համագումարի մասնակիցներուն:

Անդրադառնալով «Աստուածաբանութիւն եւ քաղաքականութիւն» նիւթին՝ վեհափառ հայրապետը աստուածաբանութիւնը սահմանեց որպէս «միտք»-ը եկեղեցւոյ: «Եկեղեցին ինքզինք կ'արտայայտէ աստուածաբանութեան ճամբով. աստուածաբանութիւնը հիմնուած է Աստուածաշունչին, Եկեղեցւոյ հայրերուն ուսուցումներուն ու տիեզերական ժողովներուն վրայ: Աստուածաբանութեան աղբիւրը Աստուծոյ յայտնութիւնն է: Այս սահմաններէն դուրս ան կը վերածուի փիլիսոփայութեան: Բանականութիւն ու հաւատք, իւրաքանչիւրը իրայատուկ դեր ունի աստուածաբանութեան մէջ», - յիշեցուց Նորին Սրբութիւնը: Շարունակելով իր խօսքը՝ հայրապետը ըսաւ, թէ աստուածաբանութիւնը «Եկեղեցւոյ դիրքորոշումը, մտածողութիւնը ու տեսակետը կը պարզէ մարդկային կեանքին առնչուած երեւոյթներուն, մտահոգութիւններուն ու մարտահրաւերներուն նկատմամբ: Նոյնը ըրաւ Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան ընթացքին: Նոյնը կոչուած է ընել այսօր Եկեղեցին: Հետեւաբար, աստուածաբանութեան մօտեցումը համապարփակ է, ո՛չ ընտրովի»: Մեկնելով այս մօտեցումէն՝ վեհափառ հայրապետը ըսաւ, որ «այսպէս «քաղաքական աստուածաբանութիւն» կոչուած իրայատուկ աստուածաբանութիւն մը գոյութիւն չունի, այլ աստուածաբանական մտածողութեան մէջ շեշտաւորումներ ու մօտեցումներ կան, որոնք իրայատուկ նկարագիր մը կու տան աստուածաբանութեան. օրինակ՝ «սեւ աստուածաբանութիւն», «կնոջական աստուածաբանութիւն», «ազատագրումի աստուածաբանութիւն», «երկխօսութեան աստուածաբանութիւն», «յոյսի աստուածաբանութիւն», «գոյապայքարի աստուածաբանութիւն» եւ այլն: Նորին Սրբութիւնը շեշտեց, որ անհրաժեշտ է դիտել աստուածաբանութիւնը եւ քաղաքականութիւնը իրենց ներքին յարակցութեան ու միաժամանակ առճակատումի շրջագիծէն ներս:

Այս ծիրէն ներս հայրապետը յատկապէս անդրադարձաւ երեք կէտերու. -

Ա) Բախում Աստուծոյ թագաւորութեան եւ մարդու թագաւորութեան միջեւ: Քրիստոս աշխարհ եկաւ քանդելու սուտի, կեղծիք, անարդարութեան, չարի ու մեղքի վրայ հիմնուած մարդու թագաւորութիւնը եւ հիմնելու երկինքի թագաւորութիւնը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Նախագահը Ընդունած Է Երեւանի «Թեքեան Կեդրոն» Հիմնադրամի Նախագահ Ընկ. Վարդան Ուզունեանը



Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան երէկ՝ Հինգշաբթի, 6 Սեպտեմբեր 2018ին իր նստավայրին մէջ ընդունած է Հայաստանի «Թեքեան կեդրոն» հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի նախագահ ընկ. Վարդան Ուզունեանին: Ընկ. Ուզունեանին ընկերակցած են Հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի անդամ՝ Ընկ. Բագրատ Նազարեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան շրջանակներու Երեւան գտնուող ներկայացուցիչներ:

Բարի գալուստ մաղթելով անոնց՝ նախագահ Սարգսեան ըսած է, որ միշտ ալ հաճելի է հանդիպիլ հին բարեկամներու հետ:

Հանդիպումը առիթ մը եղած է, որ գրուցակիցները միտքեր փոխանակեն «Թեքեան կեդրոն» հիմնադրամի կողմէ իրականացուող ծրագիրներուն եւ ապագային համար նախատեսուող ձեռնարկներուն մասին:

րութիւնը եւ հիմնելու երկինքի թագաւորութիւնը: «Ճիշդ չէ ըսել, թէ երկինքի թագաւորութիւնը պիտի գայ. ան եկած է արդէն Քրիստոսով: Հոս կը յառաջանայ բախում մը երկու թագաւորութիւններու միջեւ: Եկեղեցին կոչուած է աստուածաբանութեան ճամբով պաշտպանը ու ջատագովը ըլլալու երկինքի թագաւորութեան արժեքներուն ու սկզբունքներուն», - շեշտեց Նորին Սրբութիւնը:

Բ) Եկեղեցւոյ մարգարեական դերը Քրիստոսի կողմէ տրուած կոչում մըն է «ոչ միայն տեսակետ պարզելու, Աստուծոյ ձայնը դառնալու, այլ կեցածք ճշդելու անարդար կառոյցներու եւ այն բոլոր



Պատմութեան Մէջ Այսօր

Արնոլտ Աղապապով

Արնոլտ Աղապապով (7 Սեպտեմբեր 1929, Պաքու - 29 Մարտ 1999, Երեւան), հայ բեմադրիչ, բեմագիր:

Ծնած է 1929 թուականին Պաքու: 1947-1949 թուականներուն աշխատած է որպէս տպագրիչ, այնուհետեւ մինչեւ 1952 թուականը ծառայած է Խորհրդային բանակին մէջ: Բանակէն վերադառնալէն ետք, 1953-1957 թուականներուն աշխատած է որպէս ներքին գործերու շրջանային բաժան-

մունքի պետ: 1962 թուականին աւարտած է Մուկուայի բեմադրութեան եւ բեմագրութեան բարձրագոյն դասընթացքները (Միքայէլ Պլէյմանի եւ Վալերի Սոլովեովի արուեստանոցը): 1967 թուականէն հանդէս եկած է որպէս բեմադրիչ:

**Բեմադրիչի աշխատանքներ**  
«Գառնի» (1966), «Շէկ ինքնաթիռ», Ա. Հայրապետեան (այլ բեմադրիչ) (1975), «Արեւիկ», Ա. Հայրապետեան (այլ բեմադրիչ) (1978), «Եօթ սարէն այն կողմ» (1980), «Ուր էիր, մարդ Աստուծոյ» (1992):

**Որպէս բեմագիր**  
«Ճանապարհ», Հ. Բագրազեան (այլ բեմագիր) (1961), «Բարեւ, ես եմ» (1965), «Մեր քաղաքի մարդիկ. Գառնի» (1966), «Վերադարձ» (1972), «Սովետական Հայաստան», Ա. Կակոսեան, Ժիրայր Աւետիսեան (այլ բեմագիրներ) (1972), «Սիրամարգի ճիչ», Ֆ. Դովլաթեան (այլ բեմագիր) (1982) եւ այլն:

Նոր Սերունդներու Ուշադրութեան

-Բ-

Չգօսութեան Զրաւեր Մելգոնեան Կրթական Զաստատութեան Զարցոյժ (\*)  
Կրթական Փառաւոր Աւանդոյթ Եւ Անցեալ

Դոկտ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ  
«Զարթօնք»ի Երէջ Աշխատակից

ՄԿՅ-ին նուիրուած Բ. գրոյցով նոր սերունդներուն եւ հայրենի մեր երիտասարդ պետութեան ու ժողովուրդին ուշադրութեան կը յանձնեմ ՄԿՅ-ի ունեցած պատմական նպաստը կրթական գործին մէջ սփիւռքի տարածքին:

Յետցեղասպանութեան տարիներէն սկսեալ մինչեւ 70-80-ական թուականները հայ կազմակերպութիւններու, եկեղեցւոյ (Յայ առաքելական, Յայ կաթողիկէ, Յայ աւետարանական) եւ այլ բարեսիրական կազմակերպութիւններու հասարակական գործունէութեանց մէջ առաջին հորիզոնականին վրայ գտնուած է Յայ դպրոցներու հիմնադրութիւնը, պահպանումը եւ հետեւաբար հայեցի կրթութիւնն ու դաստիարակութիւնը: Այս իմաստով Յայ դպրոցին գոյութեան ու բարգաւաճման նուիրուած գործունէութեանց առիծի բաժինը կը պատկանէր Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (60-է աւելի դպրոցներ կը հովանաւորէր ԶԲԸՄ-ը սփիւռքի տարածքին):

Այս առնչութեամբ երջանկայիշատակ Վազգէն Ա. վեհափառ հայրապետ կը վկայէ. «Նախախնամական եղաւ ՄԿՅ-ի նպաստը սփիւռքի հայ վարժարաններին, մանաւանդ վերջին երկու համաշխարհային պատերազմների միջեւ ընկած ժամանակահատուածում, երբ բազում մելգոնեանցի շրջանաւարտներ նուիրուեցին կրթական ծառայութեան» (Կոնդակ, 20 Փետրուար 1986, ՄԿՅ-ի 60-ամեակին առթիւ): Իսկ Կիպրոսի բարեխնամ պետութեան նախագահ Ն.Վ. Սփիրոս Կիպրիանու իր ողջոյնի գիրին մէջ կը գրէր.

«The Melkonian Institute in its 60-year life has accomplished an important and multifaceted work and is today recognized as a splendid educational center and also as a focal point for intellectual and cultural development of the Armenian Community in general» (Nicosia, 10/5/1986).

Սկսինք տնօրէններէն:

**ա.- Ասատուր Պետեան (1964-1975):** Կը գեղջուի նախապատրաստական դասարանը ու կը հաստատուին ճեմարանական հինգ դասարաններ՝ պահելով յաւելեալ մասնագիտականները (Գիտական եւ արուեստի): Իր շրջանին է որ կը սկսի գործնական ու նպատակայարմար աւանդոյթ մը՝ հայրենիքէն կը հրաւիրուին հայրենի դասախօսներ, ժամանակագրականօրէն յիշելով՝ դոկտ. Պետրոս Պետիրեանը, դոկտ. Արտեմ Սարգսեանը, դոկտ. Սամուէլ Անթոսեանը, կրկին դոկտ. Ա. Սարգսեանը, Երուանդ Մելքոնեանը (հետագային Լիբանանի մէջ ԶԶ-ի Ա. դեսպան), դոկտ. Գեորգ Բաղդիշեան, կրկին դոկտ. Պ. Պետիրեան, Արա Պապեան (հինգ տարի ԶԶ արտակարգ եւ լիազօր դեսպան Գանատայի մօտ): Մարմնամարզանքի համար կը հրաւիրուին Վարուժան Մինասեան, Բաշիկ Աւագեան, պարուսոյցներ՝ Նորիկ Մեհրապեան, Գագիկ Մխիթարեան եւ



փողերախումբի ղեկավար Ֆելիքս Մովսիսեան: Նշեմ որ հայրենաբնակ մեր դասախօսները իրենց մարզերուն մէջ Յայաստանի մէջ եւ Յայաստանէն դուրս ծանչցուած մասնագետներ էին:

**բ.- Տիկ. Սօսի Պետիկեան (1976-1985):** ՄԿՅ-ի ամենէն փայլուն ուսանողուիներէն մէկն էր եղած: Բարձրագոյն ուսումն ստացած է Պէյրութի Ամերիկեան համալսարանէն ներս (տարրաբանութիւն): Ուսուցչական ասպարեզի հանդէպ իր ունեցած խոր սերն ու հաւատքը զինք կ'առաջնորդէր կրթական ասպարեզ՝ ԶԲԸՄ-ի Դարուիի Յակոբեան աղջկանց վարժարանէն ներս: Լիբանանի քաղաքացիական պատերազմի մագլցումին ընթացքին ԶԲԸՄ-ի ցկեանս նախագահ տիար Ալեք Մանուկեանի հրաւերով կը ստանձնէ իր մայր հաստատութեան տնօրէնական պաշտօնը՝ Կիպրոսի համար քաղաքական անստոյգ տարիներու ընթացքին, երբ տակաւին չէին սպիացած թրքական ներխուժման վերքերը:

1976-ին տիկ. Սօսի Պետիկեան իր բանաստեղծ, ազգային գործիչ եւ առեւտրական դասերու ուսուցիչ Վարուժան Պետիկեանի հետ կը փոխադրուի ծննդավայր:

Տիկ. Պետիկեան շուտով անցաւ նորարարութիւններու մանկավարժական ասպարեզէն ներս: Ան նախ հրաւիրեց երիտասարդ ուսուցիչներ (որոնց շարքին նաեւ տողերուս հեղինակը), յաճախակի այցելութիւններ տալով Միջին Արեւելքի հայ գաղթավայրերը՝ կրցաւ խանդավառել ծնողներ, որոնք իրենց զաւակները վստահեցան ՄԿՅ-ին: Կարճ ժամանակի ընթացքին ՄԿՅ-ը վերագտաւ իր երբեմնի համբաւը. ան նաեւ սերտացուց կապերը Մայր հայրենիքի պատկան մարմիններու եւ մտաւորականութեան հետ: Տիկ. Պետիկեան, տնօրէնական ծանր պարտականութեանց կողքին, աւարտական դասարանին կը դասաւանդէր նորագոյն շրջանի հայ ժողովուրդի պատմութիւն

եւ Յայ դատ:

**գ.- Դոկտ. Ազապի Էքմէքճեան (Նասիպեան), 1985-1988:** Նոյնպէս ՄԿՅ-ի ամենէն փայլուն շրջանաւարտներէն մին էր մանկավարժական բաժինէն: Ան 16 տարիներ դասաւանդած էր հաստատութեան մէջ՝ որպէս ընդհանուր ազգաց պատմութեան ուսուցիչ, ապա մասնագիտացած էր Լոնտոնի Օքսֆորտ համալսարանէն ներս նորագոյն շրջանի պատմութեան գծով: Իր օրով անգլիական General Certificate of Education-ի (GCE) սկսան պատրաստուիլ երկրորդական Դ. դասարանէն՝ սովորական մակարդակի (O Level) 14 նիւթերու եւ յառաջացեալ մակարդակի (A Level) 8 դասանիւթերու մէջ: Այս շրջանին կը հաստատուի նաեւ Պաքալորիայի ծրագիրը: Ինչպէս անցեալին, այդպէս ալ դոկտ. Ա. Նասիպեանի օրով հայրենագիտական առարկաները յատուկ նշանակութեան եւ կարեւորութեան արժանացած են (Յայոց լեզու, Յայ գրականութիւն, մատենագրութիւն, գրաբար, Յայ մշակոյթի պատմութիւն):

Դոկտ. Ա. Նասիպեանէն ետք տնօրէնական պարտականութիւնները կը յանձնուին դարձեալ ՄԿՅ-ի 60-ական թուականներու շրջանաւարտներէն եւ հաստատութեան մէջ երկար ատեն գլխաւոր հերթապահ եւ ուսողութեան ուսուցիչ պրն. Յարութիւն Այվազեանին (1989-1990):

Իւրաքանչիւր տնօրէն հաստատութեան յաջող երթին մէջ բերած է իր նպաստը եւ առանձնայատկութիւնը՝ յարմարելով ժամանակի թելադրած պայմաններուն եւ քայլ պահելով համաշխարհային ուսումնա-կրթական պահանջներուն հետ: Ինչո՞ւ համար 21-րդ դարուն ՄԿՅ պիտի չկրնայ նոյնը ընել, ո՞վ որոշեց, թէ ՄԿՅ-ի դերը աւարտած պէտք է նկատել, «վերելները» որոշում առնող մեր բարձրաստիճան ղեկավարներէն քանի՞ հոգի որակաւորուած են ուսումնա-կրթական ասպարեզէն ներս...

(\*) Մեր յաջորդ՝ 3-րդ գրոյցին մէջ, պիտի անդրադառնանք ՄԿՅ-էն շրջանաւարտ այլ երախտաւորներու, որոնք որպէս տնօրէն թէ ուսուցիչ զգալի օգուտ բերած են սփիւռքի հայկական վարժարաններէն ներս եւ, հետեւաբար, անուրանալիօրէն նպաստած են հայրենակերտութեան եւ հայապահպանութեան գործին:

## Լիբանանահայ Կեանք

### Լիբանանի Հայոց Առաջնորդը Այցելեց Ազգային Միացեալ Եւ Եղիշէ Մանուկեան Վարժարանները



Չորեքշաբթի, 5 Սեպտեմբեր 2018-ին՝ առաւօտեան ժամը 10:30-ին, Ազգային միացեալ վարժարանի այցելեց Լիբանանի հայոց նորընտիր առաջնորդ Գերշ. տէր Նարեկ արքեպիսկոպոս՝ մօտէն ծանօթանալու վարժարանի կառոյցին եւ գործունեութեան: Այցելութեան սկիզբը, առաջնորդ սրբազանը շրջագայեցաւ եւ բաժանմունքներուն մասին տեղեկութիւններ ստացաւ վարժարանի կրթական պատասխանատու պրն. Գրիգոր Էքմէքճեանէն եւ վարչական պատասխանատու օրդ. Նելլի Վեքիլեանէն:




Ապա տեսչարանին մէջ սրբազան հայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը (ազգային վարչութեան ատենապետ պրն. Ռաֆֆի Սիլսեան, Ազգային միացեալ վարժարանի ազգային վարչութեան ներկայացուցիչ տոքթ. Էլի Թաշճեան եւ Ազգային առաջնորդարանի տնօրէն պրն. Ռաֆֆի Տէմիրճեան) վարժարանի տնօրէնութեան խորհուրդին հետ ունեցաւ աշխատանքային հանդիպում մը: Սրբազան հայրը հաւաքին ստացաւ համապատասխան տեղեկութիւններ եւ խոստացաւ պարբերական դրութեամբ հետեւիլ վարժարանի աշխատանքներուն՝ նպաստելով վարժարանի զարգացման ճիգերուն: Այս առիթով, առաջնորդ հայրը մաղթեց, որ 2018-2019 կրթական տարեշրջանը Ազգային միացեալ վարժարանին համար ըլլայ ինքնահաստատման եւ բեղուն գործունեութեան փուլ մը, որուն յաջողութեան մէջ կրթական պատասխանատուներուն եւ ուսուցիչներուն կողքին մեծ դեր ունին ծնողները:

Իսկ Հինգշաբթի, 6 Սեպտեմբերին առաջնորդ սրբազան հայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Եղիշէ Մանուկեան վարժարան, ուր հանդիպումը կայացաւ տնօրէնութեան խորհուրդի անդամներ տիկին Անի Բագրատունիի, տիկին Սրբուհի Ճենանեանի եւ օրդ. Սեդա Պոյաճեանի հետ: Աշխատանքային հաւաքին խորհուրդի անդամները ներկայացուցին վերամուտի նախապատրաստական աշխատանքներուն ընթացքը:

Նարեկ Սրբազան յայտնեց, որ Հայ դպրոցը լիբանանահայութեան գոյապահպանման մէջ ունի իր խիստ կենսական դերը, որուն աշխատանքը կ'արժեւորուի եւ կ'արդիւնաւորուի հաւաքական, ազգային ու անշահախնդիր մօտեցումներով: Այցելութեան աւարտին, սրբազանը նաեւ հանդիպում մը ունեցաւ վարժարաններու ուսուցիչներուն հետ: Հաւաքին առաջնորդը հաստատեց, որ հայ ուսուցիչը պաշտօնեայ չէ, այլ առաքեալ, որ սերունդներու պատրաստութեան մէջ ունի սրբազան պարտականութիւն:

## Թրքական Բարքեր

### Հայոց Ցեղասպանութիւնը Ճանչցող Մտաւորականին Թուրքիան Ներառած Է Վտանգաւոր Յանցագործներու Ցուցակին Մէջ



Թրքական «Belge» հրատարակչութեան հիմնադիր-տնօրէն, «Ճշգճր ԳՖոնժեմ» լրատուամիջոցի սիւնակագիր յայտնի իրաւապաշտպան, մտաւորական Ռազմի Չարաքօլու Թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ ներառուած է հետախուզման մէջ գտնուող առաւել վտանգաւոր յանցագործներու ցանկին՝ «կարմիր ցուցակ»-ին մէջ:

Այս որոշումը առնուած է Չարաքօլուի 7 տարի առաջ ունեցած ելոյթի մը պատճառով յարուցուած քրեական գործի ծիրէն ներս: Ան կը մեղադրուի ահաբեկչական կազմակերպութեան սատարելու մէջ, կը փոխանցէ «Էրմենիհապեր»-ը:

Թուրքիա պահանջած է արտայանձնել այժմ Շուէտ բնակող մտաւորականը:

Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող եւ դատաւարտող Չարաքօլու 2011-ի Հոկտեմբերին կալանաւորուած է վերոնշեալ մեղադրանքով, սակայն 2012-ի Ապրիլին ազատ արձակուած է, իսկ 2013-ին տեղափոխուած է Շուէտ:

Թեմային շուրջ Չարաքօլու թրքական «Evrensel» պարբերականին յղած նամակին մէջ ըսած է. «Ըստ եւութեան որոշ մարդոց դարձեալ անհանգրստացուցած են իմ յօդուածները, ինչպէս նաեւ այն, որ ես կը շարունակեմ աշակցիլ մարդու իրաւունքներու պաշտպանութեան, խօսքի ազատութեան ու կը պաշտպանեմ խաղաղութիւնը: Թող անհանգստանան: Իսկ մենք կը շարունակենք մեր ճանապարհը»:

Յիշեցնենք, որ թուրք հրատարակիչ, մարդու իրաւունքներու պաշտպան Ռազմի Չարաքօլու 2011-ին Հայաստանի Ազգային գրադարանին կողմէ պարգևատրուած է Յակոբ Մեղապարտի անուն մետալով՝ որպէս հրատարակչական մեծ գործունեութիւն ծաւալող անձ, որ նաեւ տասնեակ գիրքեր նուիրած է Ազգային գրադարանին:

## Քաղուածքներ Օտար Մամուլէն

### Թուրքիան Մտադիր Է Ռազմակայան Հաստատել Նախիջեանի Մէջ. SÖZCÜ

Թուրքիան մտադիր է ռազմակայան հաստատել Նախիջեանի տարածքին մէջ: Այսպիսի տեղեկութիւն հրապարակած է թրքական «sozcü» օրաթերթի սիւնակագիրներէն Չէյնեփ Կիւրճանլը՝ իր հերթական յօդուածին մէջ:

Ռուս-թրքական յարաբերութիւններուն եւ գործակցութեան անդրադարձ կատարած Կիւրճանլը շեշտած է, որ հակառակ այն իրողութեան, որ բազմաթիւ հարցերու մէջ Թուրքիան եւ Ռուսիան գործընկերներ են, սակայն շարք մը խնդիրներու

շուրջ եւ յատկապէս Կովկասի մէջ այս երկու երկիրներուն շահերը կը բախին:

«Որքանո՞վ կրնան Անգարան ու Մոսկուան համագործակցութեան մէջ մտնել Կովկասի մէջ: Անգարայի մէջ փակ դռներու ետին քննարկուող շատ կարեւոր նիւթ կայ՝ Թուրքիան Սոմալիէն ու Քաթարէն ետք իր երրորդ արտասահմանեան ռազմակայանը կ'ուզէ հաստատել Նախիջեանի մէջ եւ արդէն գործի անցած է: Ըստ ձեզի, ինչպէ՞ս պիտի արձագանգէ մեր նոր «ռազմավարական



գործընկերը» ատոր», - գրած է թուրք սիւնակագիրը՝ յիշեցնելով հայ-ռուսական ռազմավարական սերտ համագործակցութեան մասին:

# Շնորհակալ Նախաձեռնություն

## Հոլանտայեն Արտաքստուղ Հայ Երեխաներուն Հայաստան Պատրաստ Ե Պատշաճ Խնամք Ապահովել

Հայաստանի տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության գաղթականական պետական ծառայությունը տեղեակ է հոլանտայեն երկու հայ երեխաներուն՝ 13-ամեայ Յովիկին եւ 12-ամեայ Լիլիին արտաքստելու որոշման մասին: Երեխաներու մայրը՝ Արմինե Համբարձումեան անելի կանուխ արտաքստուած էր Հոլանտայեն: Այս մասին կը հաղորդէ «Արմենփրես»-ը:

Հայաստանի գաղթականական պետական ծառայության հանրային կապերու պատասխանատու Նելլի Դաւթեան տեղեկացուցած է, որ ծառայությունը բոլոր հնարաւոր ծրագիրներով պատրաստ է աջակցութիւն ցուցաբերելու երեխաներուն, եթէ անոնց մայրը չստանձնէ խնամակալութիւնը: Նելլի Դաւթեան ընդգծեց, որ իրենք այդ երեխաներու մօր հետ ոչ մէկ կապ ունին, նոյնիսկ տեղեակ չեն, եթէ ան օգակայան պիտի երթայ դիմաւորելու երեխաներուն:

«Եթէ անոնց մայրը չստանձնի երեխաներու խնամակալութիւնը, մենք ընդելուզման բոլոր հնարաւոր ծրագիրներով երեխաներուն շահառու պիտի դարձնենք միջազգային կազմակերպութիւններու հետ համագործակցութեամբ: Շատ կազմակերպութիւններ կան, որոնց ծրագիրներով մենք երեխաներուն պիտի աջակցինք, բայց եթէ մայրը ստանձնէ խնամակալութիւնը, մենք ընելիք չունինք: Եթէ իրենք դիմեն ինչ-որ ընդելուզման ծրագրի համար, խնդիր չկայ, մենք կ'աջակցինք, եթէ նոյնիսկ իրենք չդիմեն, իսկ մայրը չըլլայ, մենք նախաձեռնող պիտի ըլլանք, իսկ եթէ մայրը խնամակալութիւնը ստանձնեց, մենք միջամտելու իրաւունք չունինք», պարզաբանած է Դաւթեան:

13-ամեայ Յովիկն ու 12-ամեայ Լիլին մօր՝ Արմինե Համբարձումեանի հետ Հոլանտա տեղափոխուած էր 2008-ին՝ Ռուսիայէն: Անոնք Հոլանտայեն ապաստան խնդրած են, որու բացասական պատասխանը ստացած են 9 տարի անց՝ 2017-ին, երբ անոնց Հայաստան արտաքստելու որոշում կայացուած է: Արմինե Համբարձումեան արտաքստուած է, սակայն երեխաները մնացած էին Հոլանտա, որովհետեւ իշխանութիւնները անոնց գտնուելու վայրի մասին տեղեկութիւններ չեն ունեցած, իսկ մայրը թաքցուցած է երեխաներու գտնուելու վայրը: 2018 Սեպտեմբեր 3-ին երեխաները դուրս եկած են թաքստոցէն: Յովիկը եւ Լիլին երբեք Հայաստան չեն ապրել, անոնք ծնած են Ռուսիա, իսկ իրենց մայրը՝ ծնած է Ատրպէյճան եւ ապրած է Ռուսիոյ մէջ, սակայն ունի Հայաստանի քաղաքացիութիւն:

Խնդրին վերջերս անդրադարձած է նաեւ Հոլանտայի արքայադուստր Լաուրենթինը: Ան երկրի կառավարութեան կոչ ըրած է թոյլ տալ երեխաներուն մնալ:

«Զեմ կրնար եւ չեմ ուզեր իրավիճակի վերաբերեալ դատողութիւններ անել, բայց ես անկեղծ կը ցաւիմ այդ երեխաներուն պատահածին համար», ըսած է արքայադուստրը անելցնելով, որ երեխաները կայունութեան կարիք ունին:

Հոլանտայի կառավարութիւնը իր հերթին յայտարարած է, որ երեխաները պետք է վերամիանան իրենց մօր հետ:

Վերջին շաբաթներուն այս հարցը դարձած է Հոլանտական լրատուամիջոցներու ու ներքաղաքական քննարկումներու գլխաւոր առարկան:



Երեխաներուն դասընկերներն ու իրաւապաշտպան կազմակերպութիւնները մի քանի օր է՝ Ամաթերտամի փողոցներու վրայ Լիլիի ու Յովիկի նկարներով ցոյցեր կատարած են:

Որոշումը հիմնաւորելու համար Հոլանտայի կառավարութիւնը փաստած է, որ Հայաստան ապահով երկիր է, եւ այնտեղ անչափահասներուն կեանքին ոչ մէկ վտանգ չի սպառնար:

Պատմութիւնը այնքան մեծ աղմուկ յառաջացուցած է, որ այս օրերուն հոլանտացի լրագրողներու խումբ մը Երեւան եկած է՝ պարզելու՝ եթէ Լիլին ու Յովիկը ի վերջոյ արտաքսուին, ի՞նչ կը սպասէ իրենց Հայաստանի մէջ, եւ ի՞նչ պայմաններու մէջ պիտի ապրին անոնք:

«Պաշտպանութիւն յանուն երեխաներու» կազմակերպութիւնը կոչ ուղղած է յառաջիկայ Հինգշաբթի զանգուածային բողոքի ցոյց կատարել եւ 25 հազար ստորագրութիւն հաւաքել արտաքսման որոշումը բողոքարկելու համար: Եթէ այս ջանքերը յաջողութեամբ չաւարտին, Յովիկն ու Լիլին պետք է լքեն երկիրը այս շաբաթավերջին՝ Սեպտեմբեր 8-ին:

## Հայաստան Ներգրաւուած Ե Բրիտանական Խորհուրդի «Creative Spark» Ծրագրին Մէջ



«Creative Spark» («Ստեղծարար միտք») խորհուրդով ծրագրի իրականացման ծիրէն ներս Սեպտեմբեր 4-ին փոխըմբռնման յուշագիր ստորագրեցին Բրիտանական խորհուրդի հայաստանեան մասնաճիւղի տնօրէն Արեւիկ Սարիբեկեան, կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեան եւ մշակոյթի նախարար Լիլիթ Մակունց:

Ծրագիրը առաջարկուած է Բրիտանական խորհուրդին կողմէ: Հնգամեայ ծրագիրը նպատակ ունի նպաստելու ձեռնարկատիրական կրթութեան եւ ստեղծարար ոլորտի զարգացման մասնակից եօթը երկիրներու, որոնց շարքին նաեւ Հայաստանի:

Նախատեսուած է ծրագրին մասնակից երկիրներու բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու (բուհ-համալսարան) մէջ ստեղծարար ձեռնարկատիրական կեդրոններ հիմնել եւ նպաստել անոնց միջեւ ստեղծարար համագործակցութեան: Այդ կեդրոնները պիտի համագործակցին նաեւ Միացեալ Թագաւորութեան բուհերու հետ: Իւրաքանչիւր միջազգային համագործակցութեան համար երկու տարուան ընթացքին պիտի տրամադրուի մինչեւ 50 հազար ֆունտ սթերլին:

Մինչեւ յուշագրի ստորագրումը Բրիտանական խորհուրդի հայաստանեան մասնաճիւղի տնօրէն

Արեւիկ Սարիբեկեան «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին ըսած է. «Այս ծրագիրը շատ անելի կայուն կրնայ ըլլալ, քանի որ պիտի ստեղծուի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու համակարգի մէջ եւ կրնայ կրթական համակարգի մաս դառնալ: Բուհերը արդէն պատասխանատու պիտի ըլլան այդ կեդրոններու հետագայ կայունացման եւ ծրագիրներու իրականացման համար»:

Հարցումին, թէ ինչ կ'ենթադրէ ծրագիրը, ինչ հնարաւորութիւններ կը տրուին մասնակիցներուն, Սարիբեկեան պատասխանեց. «Ծրագրի հիմնական գործողութիւններէն մէկն այն է, որ Հայաստանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները պետք է Մեծ Բրիտանիոյ բուհերու հետ համագործակցութիւն սկսին, եւ իրենք պետք է ներկայացնեն առաջարկ: Բաց մրցոյթի միջոցով պիտի ընտրուին այդ առաջարկները: Այսինքն, Մեծ Բրիտանիոյ բուհը եւ Հայաստանի բուհը պետք է մշակեն ծրագիր, թէ ինչպէս կը տեսնեն ստեղծարար կեդրոնի բացումը եւ զարգացումը յստակ տուեալ բուհին մէջ: Այդ կեդրոնները յետոյ կրնան աջակցութիւն ցոյց տալ ոչ միայն բուհի ուսանողներուն, այլ նաեւ ցանկութիւն արտայայտած երիտասարդ մասնագետներուն»:

Փոխըմբռնման յուշագրի ստորագրումէն առաջ, ներկայացնելով «Ստեղծարար միտք» ծրագիրը՝ Բրիտանական խորհուրդի հայաստանեան մասնաճիւղի ծրագիրներու ղեկավար Նարեկ Թովմասեան նշեց. «Միացեալ Թագաւորութեան նոր հնգամեայ ծրագիրը կ'իրականացուի եօթը երկրի՝ Հայաստանի, Վրաստանի, Ազրպէյճանի, Ղազախիստանի, Ղրղըզիստանի, Ուզպէստանի եւ Ուքրանիոյ մէջ: Ծրագրին նպատակն է աջակցիլ ստեղծագործ ձեռնարկատիրական հմտութիւններու զարգացման եւ առիտներու ոլորտի զարգացման: Ծրագիրը կը ֆինանսաւորուի Բրիտանական խորհուրդի կողմէ, որ, օգտուելով Միացեալ Թագաւորութեան ձեռնարկատիրական, կրթական փորձէն, համատեղ՝ տուեալ պարագային Հայաստանի մասնագետներու եւ հաստատութիւններու հետ պիտի մշակէ ուսումնական ծրագիրներ, որոնք անմիջապէս պիտի ունենան շահառուներ՝ իւրաքանչիւր երկրի մէջ անելի քան 10 հազար ուսանող»:

Լրագրողներու հետ ճեպագրոյցի ընթացքին կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեան նշեց. «Մենք յստակ կը գիտակցինք, որ ունինք խնդիր արուեստը եւ մշակոյթը տարածելու առումով, եւ սա հերթական նման նախաձեռնութիւնն է, որուն անմիջապէս արձագանգած ենք: Այն կեդրոնները, որոնք պիտի ստեղծուին, այն վերապատրաստումները, որոնք պիտի ըլլան, այն հմտութիւնները, զորս ձեռք պիտի բերեն մասնակիցները, թոյլ կու տան լուծել իմ նշած խնդիրներս: Շատ լաւ է, որ ծրագիրը հինգ տարուան ընթացքին պետք է իրականացուի, ինչ որ կը նշանակէ, որ շատ անելի շատ շահառուներ պիտի ներգրաւուին»:

Մշակոյթի նախարար Լիլիթ Մակունց անելցուց. «Հայաստանի Հանրապետութիւնը ունի ստեղծարար եւ ստեղծագործ մտքի մեծ կարողականութիւն, եւ ատիկա է պատճառը, որ թէ՛ Բրիտանական խորհուրդը, թէ՛ կրթութեան ու գիտութեան նախարարութիւնը եւ թէ՛ մշակոյթի նախարարութիւնը որոշած են յատուկ կերպով ուշադրութիւն դարձնել այս հանգամանքին վրայ եւ հանդէս գալ նախաձեռնութիւններով, որոնք միտումնաւոր են այդ ոլորտի զարգացման»:

## Հայ ժողովրդական Կուսակցության Ղեկավար Միքայել Պապաճանեանի Հասարակական-Քաղաքական Գործունեութիւնը

### ԳՐԴԱՐ ԱՐԱԳԵԱՆ ՀՀ Ազգային Արխիվի Վաստակաշատ Արխիւագետ

Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութեան նախագահ ընտրուած Եսայի Կարիկեանը ֆրանսահայութեան մէջ տարածած կոչումն էր, որ ՀՅԴ-ը գաղութահայութեան մէջ պետք է հետապնդի երկու նպատակ. «Առաջինը՝ Հայաստանը ճանչցնել գաղութներուն, եւ հետաքրքրել զանոնք Հայրենիքի ներկայ իրականութեան եւ ապագայ հնարաւորութիւններուն, դաստիարակել զանոնք պետական եւ քաղաքացիական ըմբռնումներով զանգուածային աշխատանքի, կազմակերպելով դասախօսութիւններ եւ փրոփակական տի գանազան միջոցներ: Եւ երկրորդ՝ նիւթական աղբիւրներ գտնել եւ ստեղծել, գործնականապէս օժանդակելու վերաշինութեան նուիրական գործին»[487]: Ըստ ՀՅԴ-ի Ֆրանսիայի շրջանի ծրագիր-կանոնագրի՝ կենտրոնական վարչութիւնը ՀՅԴ-ի Ֆրանսիայի շրջանի վերին գործադիր մարմինն էր, այն պէտք է իր միջից ընտրեր իր ղեկանը՝ նախագահ, քարտուղար, փոխանորդներ եւ գանձապահ: Կենտրոնական վարչութեան պարտականութիւնն էր ղեկավարել ՀՅԴ-ի ընդհանուր գործը՝ գործադրելով նրա նպատակի իրականացման համար հարկ եղած աշխատանքները: Պէտք է վաւերացնել մասնաճիւղերի վարչութիւնների ընտրութիւններն ու որոշումները, հսկել մասնաճիւղերի գործունեութեանը, հասարակութեանը տեղեկացներ Հայաստանում կատարուող վերաշինական աշխատանքների եւ ՀՅԴ-ի գործունեութեան մասին: Կենտրոնական վարչութիւնը մասնաճիւղերի ողջ հասոյթը պէտք է կենտրոնացներ իր մօտ՝ նպատակին ծառայեցնելու համար[488]:

Միքայել Պապաճանեանը, 1926-ի սկզբներին, ընտրուելով ՀՅԴ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութեան նախագահ, անմիջապէս ու մեծ եռանդով ձեռնամուխ եղաւ նրա նպատակների իրականացմանը: Նրա գործունեութիւնը այս նոր պաշտօնում տարուում էր հիմնականում երկու ուղղութեամբ. ա) ՀՅԴ-ի ցանցի ընդարձակում՝ Ֆրանսիայի տարբեր քաղաքներում ու ավաններում նոր մասնաճիւղեր հիմնելով եւ բ) նիւթական միջոցների հայթայթում ու դրանց առաքում Հայաստան:

Պապաճանեանը իր ուշադրութիւնը կենտրոնացրեց կազմակերպչական աշխատանքների վրայ, եւ կարճ ժամանակում գրանցուեցին բաւականին լուրջ արդիւնքներ: Մայր հայրենիքի վերաշինութեանը նպաստելու, հայրենիք սփիւռք կապը հաստատ պահելու համար անհրաժեշտ էր առաջին հերթին ընդլայնել ՀՅԴ-ի ցանցը եւ հնարաւորինս շատ սփիւռքահայ ընդգրկել նրա մէջ: 1926 Ապրիլի 17-ին ՀՅԴ-ի Երեւանի գլխաւոր վարչութեանը ուղ-

ղած նամակում Պապաճանեանը յայտնում էր, որ Ֆրանսիայում ՀՅԴ-ի մասնաճիւղերի թիւը արդէն հասել է 19-ի: «Պիտի աշխատենք Ձեր աջակցութիւնով զօրացած, ուժեղ կազմակերպութիւն մ'առաջ բերել, որ կ'արդարացնէ իր վրայ դրուած բոլոր յոյսերը եւ կատարել իրեն վստահուած պարտականութիւնները»[489]: Նոյն նամակում գրում էր Պապաճանեանը: Յիրաւի, Ֆրանսիայում նոր մասնաճիւղեր հիմնելու աշխատանքները առաջ էին գնում մեծ թափով, եւ Երեւանում դրանից գոհ էին: ՀՅԴ-ի Երեւանի գլխաւոր վարչութիւնը, Մայիսի 18-ի գրութեամբ այդ առթիւ իր գոհունակութիւնն էր յայտնում Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութեանը. «Ուրախ ենք, որ շրջանային վարչութիւնը կարճ ժամանակաւ ընթացքում կարողացել է կազմակերպչորէն այդքան ուժեղանալ եւ ընդլայնել մեր կազմակերպութեան ցանցը՝ ընդգրկելով ամբողջ ֆրանսահայ գաղութը»[490]:

ՀՅԴ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութիւնը 1926 Յուլիսի 29-ին՝ իր հիմնադրումից ճիշդ մէկ տարի անց, ժողով հրաւիրեց, որին մասնակցում էր նաեւ Շահուերդեանը: Վերջինս, ծանօթանալով վարչութեան միամտայ գործունեութեանը եւ ձեռքբերումներին, միանգամայն գոհացուցիչ գտաւ արդիւնքները: Շահուերդեանը իրաւունք տուեց վարչութեանը մասնակցել ներգաղթի աշխատանքներին, ինչը, Պապաճանեանի վկայութեամբ, մեծապէս կը բարձրացներ վարչութեան հեղինակութիւնը [491]: Բացի այդ Շահուերդեանը համաձայնեց նաեւ, որպէսզի վարչութիւնը զբաղուի հրատարակչական գործերով: Այս կապակցութեամբ Եղիա Չուբարին յանձնարարուեց հրատարակչական աշխատանքների կազմակերպման նախագիծ կազմել եւ ներկայացնել վարչութեան քննարկմանը: Թէ՛ Շահուերդեանը, թէ՛ Ս. Փիրումեանը[492] այնքան գոհացուցիչ էին գտնում ՀՅԴ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական կոմիտէի գործունեութիւնը, որ նպատակաւորմար էին համարում այն դարձնել արտասահմանեան բոլոր շրջանների (բացի Միացեալ Նահանգներից) կենտրոն[493]: Իսկապէս, միառժամանակ ՀՅԴ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութեան վրայ դրուեց նման գործառոյթ: Այսպէս՝ Մեծն Բրիտանիայի, Բելգիայի, Արգենտինայի, Եգիպտոսի եւ այլ վայրերի ՀՅԴ-ի մասնաճիւղերի կողմից հանգանակուած գումարները Խորհրդային Հայաստան էին հասնում Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութեան միջոցով, վարչութեան նախագահ Միքայել Պապաճանեանը Երեւան առաքած իր զեկուցագրերում պարբերաբար տեղեկութիւններ էր հաղորդում Երոպայի, Ասիայի, Ափրիկէի ու Հարաւային Ամերիկայի երկրներում գործող ՀՅԴ-ի մասնաճիւղերի գործունեութեան

մասին: 1926 Նոյեմբերի 3-ին ՀՅԴ-ի Երեւանի կենտրոնական վարչութիւնը յանձնարարեց Պապաճանեանին հետամուտ լինել ՀՅԴ-ի գործունեութեանը միայն Միջագետքում ու Սիրիայում, քանի որ այդ վայրերում մասնաճիւղերը դեռ նոր էին կազմակերպուում, եւ տակաւին գոյութիւն չունէր այնպիսի մի փորձուած մասնաճիւղ, որին կարելի լինէր վստահել «կենտրոնական ճիւղի» պարտականութիւնները[494]: Ինչ վերաբերում էր Հարաւային Ամերիկայի մասնաճիւղերին, ապա Երեւանը աննպատակաւորմար էր գտնում այդ երկրների մասնաճիւղերի վերահսկողութիւնը Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութեանը թողնել, քանի որ Նիւ Եորքում արդէն կազմակերպուած էր կենտրոնական վարչութիւնը[495]: Երոպայում, Ասիայում, Ափրիկէում գործող ՀՅԴ-ի արդէն ստեղծուած մասնաճիւղերի վերահսկողութեան եւ տրեքի կազմակերպման աշխատանքը ընթանում էր բաւականին դժուարին պայմաններում: Արդէն ասուեց, որ ՀՅԴ-ի առաքելութեան խնդրում հայկական գաղթավայրերում տարբեր քաղաքական կուսակցութիւնների, կազմակերպութիւնների ու խաւերի դիրքորոշումը տարբեր էր: Դրանցից խոշորագոյնը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, սկզբից եւեթ թշնամական դիրքորոշում ուներ ՀՅԴ-ի նկատմամբ՝ հայկական գաղթավայրերում նրանց գործողութիւնները ընդունելով իբրեւ համայնավարական գաղափարախօսութեան տարածող ու ազգային միասնութեանը վնասող երեւոյթ: Հնչակեան Կուսակցութիւնը սկզբնական շրջանում որոշ մասնակցութիւն ունեցաւ՝ մասնաճիւղերում իր ներկայացուցիչները նշանակելով, սակայն արդէն 1926-ի վերջերին նրանք եւս դադարեցրին իրենց օժանդակութիւնը՝ հրապարակային յայտարարութիւններով արգելելով իրենց համակիրներին մասնակցելու ՀՅԴ-ի մասնաճիւղերի աշխատանքներին[496]: Ռամկավար ազատականները դեռեւս շարունակում էին լայնօրէն սատարել մասնաճիւղերի գործունեութեանը՝ հայ ազգի գոյատեւման միակ պայմանը տեսնելով Խորհրդային Հայաստանի կայացման ու բարգաւաճման մէջ: ՀՅԴ-ի Երեւանի կենտրոնական վարչութեանը յղած զեկուցագրերում Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութեան նախագահ Միքայել Պապաճանեանը բազմիցս նշում է վերոգրեալ կուսակցութիւնների յարուցած այն խոչընդոտների մասին, որոնք դժուարեցնում եւ երբեմն էլ անհնարին են դարձնում մասնաճիւղերի կազմակերպումը կամ ստեղծուածների գործունեութիւնը: Դրա լաւագոյն օրինակը Պէյրութի մասնաճիւղի ստեղծումն ու լուծարումն էր:

Շար. 49

[487] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 397, թթ. 58-59:

[488] Ծրագիր-կանոնագիր Հ.Օ.Կ, թթ. 10-11: Մեզ չյաջողուեց նրա ընտրութեան ճիշդ ամսաթիւը պարզել: Հայաստանի Ազգային Արխիւում յայտնաբերուած առաջին փաստաթուղթը, որը ստորագրուած է Պապաճանեանի կողմից՝ իբրեւ Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչութեան նախագահ, կրում է 3 Մարտի 1926 ամսաթիւը:

[489] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 430, թթ. 49-51:

[490] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 423, թ. 10:

[491] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 430, թ. 34:

[492] Փիրումեան Սիմոն (Սիմոնիկ) -- Կովկասահայ պետական հասարակական գործիչ, լրագրող: 1925-ի Անդրկովկասեան Հանրապետութիւնների եւ Հայաստանի առեւտրի ներկայացուցիչը Փարիզում: ՀՍԽ՜Ղ կառավարութեան ներկայացուցիչը Ազգերի Լիկայում:

[493] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 443, թ. 130:

[494] Նոյն, թ. 31:

[495] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 443, թ. 32:

[496] ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 135, թ. 37:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Ընկերության կեանքին Յետ Աղերս Ունեցող Հարցերուն Ակադմիայի Եկեղեցին Իր Իւրայատուկ Ընելիքը Ունի» Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Էջ 02

Երեւոյթներուն նկատմամբ, որոնք չարին ու մեղքին տիրապետութիւնը կը հաստատեն ընկերութեան կեանքէն ներս այլազան կերպերով»,- յիշեցուց վեհափառ հայրապետը:

Գ) Ուժի հարցը կարելոր է եկեղեցի-ընկերութիւն յարաբերութեան մէջ: Այս գծով հայրապետը յայտնեց, որ «ընկերութեան կառոյցները հիմնուած են ուժի վրայ, իսկ Աստուծոյ թագաւորութիւնը հիմնուած է խաչին վրայ: Խաչը ժխտումն է մարդկային ուժին. ան աստուածային ուժին ներկայութիւնն է. մահուան մահով յաղթելու Քրիստոսի յաղթական յարութիւնը պարտութիւնն է մարդկային ուժին՝ աստուածային ուժին դիմաց»: Երկնային ու երկրաւոր ոյժերու, այս հակադրութեան դիմաց, եկեղեցւոյ դերը շեշտել է սիրոյ, ծառայութեան ու ճշմարտութեան հրամայականը՝ որպէս երկնային ուժի աղբիւրի:

Վեհափառ հայրապետը ամփոփ գիծերով պարզել է ետք նաեւ այլ երեւոյթներ՝ աստուածաբանութիւն ու քաղաքականութիւն յարաբերութեան առնչուած, հետեւեալ չորս գլխաւոր կետերու մէջ ամփոփեց իր նկրթին առնչուած կարելոր երեւոյթները.

Ա) «Աստուածաբանութիւնը չի կրնար ապաքաղաքական ըլլալ, որովհետեւ ան կոչուած է իր տեսակետն ու կեցուածքը արտայայտելու ընկերութեան կեանքին բոլոր հարցերուն գծով: Միաժամանակ, եկեղեցին չի կրնար նոյնանալ քաղաքական ու գաղափարախօսական կառոյցներու, օրակարգերու կամ շարժումներու հետ»: Ապա հայրապետը յիշեցուց, որ նման մօտեցում զգայուն ու երկդիմի կացութիւն կրնայ ստեղծել եկեղեցւոյ, որովհետեւ ան որպէս աստուածամարդկային կառոյց կը գործէ ընկերութեան կեանքէն ներս ու ենթակայ է միշտ անկից եկող ազդեցութիւններուն: Շարունակելով իր խօսքը՝ Նորին Սրբութիւնը ըսաւ. «Երբ նայինք պատմութեան, կը տեսնենք, որ եղած են դէպքեր ու կացութիւններ, երբ եկեղեցին սխալած է կամ թերացած իր մարգարեական դերակատարութեան մէջ: Եկեղեցին կոչուած է ճշմարտութեան, արդարութեան, իրաւունքի ու համերաշխութեան շատագովը ըլլալ: Համաշխարհային երկրորդ պատերազմի օրերուն, գերմանական եկեղեցիներուն կեցուածքը Հիթլերի նկատմամբ պերճախօս վկայութիւն մըն է այս գծով»:

Բ) «Եկեղեցին, իր բարոյական հեղինակութեամբ, պետք է հաշտարարի ու միջնորդի դերը կատարէ թէ՛ ժողովուրդի կեանքէն ներս յառաջացած եւ թէ՛ ժողովուրդ-իշխանութիւն բեւեռացումներու գծով: Եկեղեցին պետք է կողմ ըլլայ. իր մօտեցումները պետք է իրենց մղումը առնեն աստուածաշնչական սկզբունքներէն»:

Գ) «Եկեղեցին պետք է մերժէ որեւէ մօտեցում, որ զինք կը նկատէ որպէս հաստատութիւն: Եկեղեցին հաստատութեանական արտայայտութիւն ունի, սակայն ան հաւատքի համայնք է, Քրիստոսի խորհրդական մարմինը: Եկեղեցւոյ այս ինքնահասկացողութիւնը հիմքն է իր աստուածաբանական մտածողութեան»:

Դ) «Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ինքնանպատակ չէ: Աստուածաբանութիւն ու առաքելութիւն սերտօրէն առնչուած են: Եկեղեցւոյ մտածողութիւնը կոչուած է ուղղութիւնը տալու եկեղեցւոյ առաքելութեան՝ ընկերութեան կեանքէն ներս»:

ՄԱՅԱԶԴ

Տեր եւ Տիկ. Վիգէն եւ Մարիա Թոսունեան եւ զաւակը Կարէն

Տեր եւ Տիկ. Պերճ եւ Քրիսթին Թոսունեան եւ զաւակունք

Տեր եւ Տիկ. Ժան եւ Սեդա Քիրեճեան

Տեր եւ Տիկ. Սերժ եւ Մարին Համբարձումեան եւ դուստրը

Համբարձումեան ընտանիք

Տիկ. Նուարդ Ամատունի եւ զաւակունք

Տեր եւ Տիկ. Յարութիւն եւ Լուսին Թոսունեան եւ զաւակունք (Յորդանան)

Տեր եւ Տիկ. Յակոբ եւ Անի Երեմեան եւ զաւակունք

եւ համայն Համբարձումեան, Թոսունեան, Քիրեճեան, Ամատունի, Թոքաթեան, Սեֆիլեան, Օսկանեան, Օսնիկեան, Երեմեան, Սարաֆեան եւ Թաշճեան ընտանիքներ կը գուժեն իրենց դասեր, քրոջ, զարմուհիին եւ հարազատին՝

ՄԱՐԻԱ ԱՆԺԵԼԱ ԹՈՍՈՒՆԵԱՆ-Ի (Ծնեալ Պէյրութ, 2004-ին)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 5 Սեպտեմբեր 2018-ին յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 7 Սեպտեմբեր 2018-ին, կէսօրէ ետք ժամը 3-ին, Ռմէլլի Ս.Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Գերեզմանատունը:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: Յաւակցութիւնները պիտի ընդունուին Ուրբաթ 7 Սեպտեմբերին թաղման արարողութենէն ետք մինչեւ երեկոյեան ժամը 7:00, եկեղեցւոյ սրահին մէջ: Իսկ Շաբաթ 8 Սեպտեմբերին առաւօտեան ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, նոյն վայրին մէջ: \* \* \*

Մարիա Անժելա Թոսունեանի մահուան տխուր առիթով «Չորեքշաբթի» իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն, ի մասնաւորի հանգուցեալին ծնողքին ընկ. եւ Տիկ. Վիգէն եւ Մարիա Թոսունեաններուն:

Որպէս իր դասախօսութեան եզրափակիչ կէտ՝ Նորին Սրբութիւնը ըսաւ. «Ընկերութեան կեանքին հետ անմիջական աղերս ունեցող հարցերուն նկատմամբ՝ կառավարման վարչաձեւէն մինչեւ կենսալոյրտ, ընկերատնտեսական խնդիրներէն մինչեւ մարդկային իրաւանց հարցեր, եկեղեցին իր իւրայատուկ ընելիքը ունի՝ միշտ մեկնելով աստուածաշնչական արժեքներէ ու ուսուցումներէ եւ պահելով իր դերակատարութեան իւրայատկութիւնը»:

Աստուածաբանութիւն-քաղաքականութիւն յարաբերութեանց շուրջ իր կատարած վերլուծումներուն ու քննարկումներուն ընթացքին, Նորին Սրբութիւնը մեջընդմէջ անդրադարձաւ պատմական ու ժամանակակից դէպքերու ու երեւոյթներու՝ առնչուած ընդհանրական եկեղեցւոյ կեանքին: Այս ծիրէն ներս ան նաեւ յիշեց Հայ եկեղեցին ու Միջին Արեւելքի եկեղեցիները՝ պարզելով եկեղեցւոյ որդեգրելիք կեցուածքը ներկայ ժամանակներու տագնապներուն ու մարտահրաւերներուն նկատմամբ:

Շուրջ ժամ մը տեւած դասախօսութեան աւարտին, վեհափառ հայրապետը պատասխանեց ներկաներուն կողմէ իրեն ուղղուած շարք մը հարցումներուն:

ՅԱՒԱԿՅԱԳԻՐ

Խոր ցաւով իմացանք ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ ընկ. Վիգէն Թոսունեանի դասեր՝ Մարիա Անժելա Թոսունեանի անժամանակ մահուան գոյժը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 5 Սեպտեմբեր 2018 ին:

Մեր վշտակցութիւնները կը յայտնենք ընկ. Վիգէն Թոսունեանին եւ իր տիկնոջ ու որդւոյն ինչպէս նաեւ հանգուցեալին ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն:

ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութիւն \* \* \*

Սրտի անհուն կակիծով իմացանք վարչութեանս գործակից ընկեր Վիգէն Թոսունեանի դասեր՝ Մարիա Անժելա Թոսունեանի մահուան ցաւալի գոյժը:

Խորապէս կը ցաւակցինք հանգուցեալին ծնողքին, հարազատներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ԹՍՍ Լիբանանի Տեղական Վարչութիւն \* \* \*

ՌԱԿ Չարթօնք ակումբի անդամներս խոր ցաւով իմացանք Ընկ. Վիգէն Թոսունեանի դասեր Մարիա Անժելայի վաղաժամ մահուան գոյժը:

Այս տխուր առիթով մեր ցաւակցութիւնները Ընկ. եւ Տիկ. Վիգէն եւ Մարիա Թոսունեանին, իրենց զաւակին Կարէնին եւ բոլոր հարազատներուն:

ՌԱԿ Չարթօնք Ակումբի Վարչութիւն \* \* \*

Սրբոց Հռիփսիմեանց Վարժարանի տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը կը գուժեն վարժարանի աշակերտուհիներէն՝ Մարիա Անժելա Թոսունեանի անակնկալ մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 5 Սեպտեմբեր 2018ին: Կոչ վարժարանի աշակերտութեան՝ ներկայ գտնուելով յուդարկաւորութեան արարողութեան, յարգանքի վերջին տուրքը մատուցեն իրենց դասընկերուհիին:

Տնօրէնութիւն

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՌԱԿ ՊԱՅՔԱՐ ԱԿՈՒՄԲ ՌԱԿ Պայքար Ակումբի ընդհանուր անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 7 Սեպտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 7:00-ին Պայքար Ակումբին մէջ, Պուրճ Համուտ:

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՌԱԿ ՇՈՒՇԱՆ-ՎԱՐԴԵՆԻ ԱԿՈՒՄԲ ՌԱԿ Շուշան-Վարդենի Ակումբի ընդհանուր անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 10 Սեպտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 6:00-ին Թէքէան Կեդրոնի մէջ, Ժըմմէլգի:

Լիբանանեան Լուրեր

Էջ 01 >>

Պըրրի Ըսաւ, Որ Բոլորը Պատասխանատու Են Կառավարութեան Կազմաւորման Յետաձգումին

Խորհրդարանի նախագահ Նապիհ Պըրրի Յինգաբթի խմբագիրներու սենտիքայի պատուիրակութեան մը հետ հանդիպումի ընթացքին ըսաւ, որ քաղաքական բոլոր կողմերը պատասխանատու են կառավարութեան ձեւաւորման երկարաձգումին: Այս մասին կը հաղորդէ ազգային լրատւական գործակալութիւնը:

«Բոլորը պատասխանատու են կառավարութեան կազմաւորման յետաձգումին», - ԱԼԳ-ը կը մեջբերէ Պըրրիի խօսքը:

Պըրրի նաեւ անդրադարձաւ այն շրջանառուող լուրերուն, ըստ որոնց՝ կազմաւորման գործընթացը կապուած է օտար միջատմութիւններու: «Եթէ իրապէս օտար միջատմութիւններ ըլլային, շատոնց կարելի կ'ըլլար կազմաւորել կառավարութիւնը», - դիտել տուաւ խորհրդարանի նախագահը:

Հայրենի Լուրեր

Էջ 01 >>

Կառավարութիւնը Կը Խրախուսէ Ներդրումային Հերթական Ծրագիրը. Կը Ստեղծուի 112 Նոր Աշխատատեղի

միանուագ նպաստի չափի տարբերակումը կը սկսի երրորդ երեխայէն սկսեալ: Փոփոխութիւններով կ'առաջարկուի երեխայի ծննդեան միանուագ նպաստի չափերու տարբերակում մտցնել նաեւ երկրորդ երեխայի ծննդեան պարագային: Հետեւաբար, 2018-ի Հոկտեմբեր 1-ին կամ անկէ ետք ընտանիքի մէջ ծնած երկրորդ երեխայի ծննդեան կապակցութեամբ տրուող միանուագ նպաստի չափը կ'աւելնայ 3 անգամ՝ 50 հազար դրամի փոխարէն նաստի չափը կը կազմէ 150 000 դրամ: Ըստ վիճակագրական տուեալներու՝ 2014-2016 թուականներուն երկու կարգաթիւ ունեցող նոր ծնած երեխայի թիւը հետեւեալն է՝ 16 051, 15 850, 15 032: 2018-ի 2-րդ կիսամեակին երկու կարգաթիւ ունեցող նոր ծնած երեխաներու թիւը կանխատեսուած է 7500: Այս պարագային, պիտոճեական լրացուցիչ միջոցներու պահանջը 2018-ի Հոկտեմբեր-Դեկտեմբեր ամիսներուն կը կազմէ շուրջ 375 մլն դրամ, իսկ 2019-ին եւ հետագայ տարիներուն համար՝ տարեկան շուրջ 1.5 միլիարդ դրամ: Պիտոճեական անհրաժեշտ յատկացումները 2018-ի համար կ'իրականացուին ՀՀ 2018-ի պետական պիտոճեով ընկերային պաշտպանութեան ոլորտի գծով նախատեսուած ընդհանուր յատկացումներու ծիրէն ներս:

Արժարձուած հարցին առնչութեամբ ծաւալուած է միտքերու փոխանակութիւն, հնչած են շարք մը դիտարկումներ, առաջարկներ, մասնաւորապէս զոյգ երեխայի պարագային կրկնապատկել ծննդեան միանուագ նպաստի չափը: Վարչապետին առաջարկով՝ որոշումին ընդունումը յետաձգուած է՝ յաջորդ նիստին յաւելեալ առաջարկներով լրամշակուած տարբերակ ներկայացնելու համար: Կառավարութեան ղեկավարը, ընդգծելով թեմայի կարեւորութիւնը, յոյս յայտնած է, որ ծննդաբերողին ցոյց տրուող բժշկական օգնութեան, ծնելիութեան խթանման համար նախատեսուած գումարները յաջորդ տարի չեն բաւականացներ եւ անհրաժեշտութիւն կ'ըլլայ տարուան կեսին այդ գումարները աւելցնել: «Սա շատ կարեւոր թեմա է, եւ մեզ հարկաւոր է ծնելիութեան բում», - ըսած է Նիկոլ Փաշինեանը:

Միջազգային Լուրեր


Էջ 01 >>

Ազրպէյճանի Մէջ Ընդդիմադիր REAL Կուսակցութիւնը Խորհրդարանական Արտահերթ Ընտրութիւններ Կը Պահանջէ

պետութեան մը պատկանող գրպանային պատգամաւորները չփոխարինելին մէկ այլ սակաւապետութեան պատկանող գրպանային պատգամաւորներով», - ըսած է Մամետովը:

Իլգար Մամետովը 2013-ին ազատագրուած էր 7 տարի ժամկետով եւ կը մեղադրուէր զանգուածային անհնազանդութեան գործողութիւններ հրահրելու յատկանիշներով:

Մամետովը պայմանականօրէն ազատ արձակուած է 2018-ի Օգոստոս 13-ին:



**ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀՆՈՐՅԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Լիբանանի Հայոց Նորընտիր Առաջնորդ **Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս** շնորհաւորութիւններ պիտի ընդունի հինգշաբթի, 13 սեպտեմբեր 2018-ին, կէսօրէ ետք ժամը 4:00-էն 9:00, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան- Եռագոյն» սրահին մէջ:

**ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԲՈՅՐԵՐՈՒ ՍՐԲՈՅ ՀՈՒՓՄԻՄԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ Ֆանար - Լիբանան 2018-2019 Տարեշրջան Հեռ. 01/891068 - 891099**

2018-2019 Տարեշրջանի Արձանագրութիւններ  
2018-2019 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները կը վերսկսին երկուշաբթի, 3 սեպտեմբերին, ամէն օր (բացի շաբաթ օրերէն), առաւօտեան ժամը 8:30-էն 12:30:

Այս տարեշրջանին եւս վարժարանս կը շարունակէ ընդունիլ ծիլ դասարանէն մինչեւ 12-րդ կարգի աշակերտներ՝ երեք բաժանմունքներու մէջ.

- Ընդհանուր գիտութիւն (SG)
- Կենսաբանութիւն (SV)
- Ընկերատնտեսութիւն (SE)

Նորեկ աշակերտներու ծնողներէն կը խնդրուի ներկայանալ քարտուղարութեան՝ անհրաժեշտ փաստաթուղթերու եւ տեղեկութիւններու համար:

**ՎԵՐԱՍՈՒՄԻ ԹՈՒՎԱԿԱՆՆԵՐ**

- Չորեքշաբթի, 12 սեպտեմբեր 2018 - Թ., Ժ., ԺԱ. եւ ԺԲ. դասարաններուն համար՝ առաւօտեան ժամը 7:25-12:20
- Երեքշաբթի, 25 սեպտեմբեր 2018 - Նախակրթարանի եւ Միջնակարգի բոլոր դասարաններուն համար՝ առաւօտեան ժամը 7:25-12:20
- Հինգշաբթի, 27 սեպտեմբեր 2018 - Մանկապարտեզի բոլոր դասարաններուն համար՝ առաւօտեան ժամը 7:25-12:20

**ԾԱՆՕԹ**

- 1) Երկուշաբթի, 1 հոկտեմբերէն սկսեալ դասաւանդութիւնը կ'ըլլայ լիաժամ՝ առաւօտեան ժամը 7:25-14:30:
- 2) Գրեական պիտոյքի եւ համազգեստի վաճառում՝ երկուշաբթի, 10 սեպտեմբերէն սկսեալ՝ առաւօտեան ժամը 8:30-1:00, (բացի շաբաթ օրերէն):  
Ուսումնական նոր վերելքներու ակնկալութեամբ բարի վերամուտ կը մաղթենք մեր ծնողներուն եւ աշակերտներուն:

Պահանջով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեանս տեսակէտը: Կամքէ անկախ սպորտի վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան: